# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2025 թվականի N 355-Ա**

**«ԽՆՁՈՐԵՍԿԻ ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՆՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՕԼՅԱ ԲՈՒԼԲՈՒԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ ԳՈՀԱՐ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Օ. Բուլբուլյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ.**

1. «Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Օլյա Բուլբուլյանին 2025 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 15-ը ներառյալ տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը՝ 15 աշխատանքային օր:
2. Օ. Բուլբուլյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսուցչի օգնական Գոհար Սարդարյանին:

Recoverable Signature

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN HAYK 1302840382

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
ք.Կապան